

Փ Ո Ւ Ն Ձ

ԱԶԳԱՅԻՆ

Հարկաւ այսօր ալ մեր լրագիրը ձեռք առնողները՝ կովկասեան գաւառի մէջ բնակեալ մերազնէից վրայ հրատարակուած զրոյցներուն վերաբերեալ ծանօթութիւններ պիտի որոնեն :

Գիտնալով զայս, ինչպէս նաև մեք իբրև հայ պէտք ունենալով շարաթ օրէն հետէ ամեն հետազոտութիւն ըրինք, ստոյգ կամ գէթ հաւանական տեղեկութիւն մը ստանալու համար :

Շարաթ օրէն հետէ Հայրենիքի, Մամուլ, Լոյսի, Նորագրի և Լրագրի հետըզհետէ հրատարակած յաւելումները տեսանք, ուշի ուշով և քանիցս կարգացինք, բայց մեք չկրցանք լոյս մ'առնուլ : Կարդացինք նաև յիշեալ լրագրաց սովորական թերթերն ալ, և ներուի մեզ ըսել՝ ամենքն ալ բուն խնդրէն օտար պարագաներով լի գտանք :

Մինչև ցարդ հրատարակեալ տեղեկութեանց մէջ ամենէն աւելի աչքի դարնողը Լրագրի հրատարակած նամակներն են, որոնք նրևանէն գրուած են եղեր :

Ասկէց զատ՝ Լոյսի յաւելումներն մէջ գտնուած ս'ա պարբերութիւնը, այսինքն թէ՛ շարաթ առաւօտ կարսէն նոր եկած ճանապարհորդէ մը կովկասեան Հայոց րոյտալ մի յայտարարութիւնը ձեռքն հասեր է (Լոյսի խմբագրին), և թէ սոյն յայտարարութիւնը բաւական ընդարձակ է, և կովկասեան Հայոց կողմանէ ի զէն կհրաւիրէ բոլոր Հայերն՝ յանուն իրաւանց, յանուն ազատութեան՝ Ռուսիոյ դարաւոր բռնութեան շղթաներն խորտակելու :

Յայտնի է թէ Մէծմուսայը Հաւատիս և Նորագրի ալ ճանապարհորդէ մը առնելով հրատարակած էին :

Մամուլ ալ կիւրակէ օրը յաւելումով մը հրատարակեց :

Այս հրատարակութիւնները՝ վեր ի վայր յուզեցին մեր ամեն աստիճանի և կարգի ազգայինները . խիստ շատերը իրենց սովորական աշխատութիւններէն ձեռնթափ ըլլալով սկսան անդին ասդին կնալ, ստոյգ տեղեկութիւն որոնել, և բազումք, մանաւանդ կիւրակէ օր եկեղեցիներն ու դպրոցները հաւաքեցան ստոյգ ծանօթութիւններ ստանալու համար, և ամեն տեղ օգնութիւն ու նըպաստ հասուցանելու սրտեռանդն յայտարարութիւններ կըսուէին : Ատենախօսութիւններ եղան տեղ տեղ, բայց տըրուած տեղեկութիւններն ամենքն ալ ընդազօտ էին, և ո՛չ ոք կհամարձակէր իբրև ստոյգ հուշակել : Տարակուսանքն ու շիրթութիւնը տիրեց ամեն տեղ :

Երկուշաբթի ալ, Նորագրի և Լրագրի թերթերն՝ Բ. Գրան ազգարարութեան վրայ, հրատարակեցին թէ անհիմն են այս մասին իրենց տուած տեղեկութիւնները :

Երկուշաբթի փաղաքական ժողովն ալ արտաքոյ կարգի նիստ ըրաւ Ղալաթիա ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր : Ժողովուրդը գունդ գունդ յուզեալ կդիմէր խորհրդարանը. կամ ստոյգ տեղեկութիւն և կամ ստույթեանց հեղինակներուն անյապաղ պատժուիլը կը պահանջէր . սակայն ժողովն ի հանդարտութիւն կ'յորդորէր բազմութիւնը, յայտարարելով թէ մինչև ցայն ժամ որևէ տեղեկութիւն չունի :

Յիշեալ հրատարակութիւններն ընող թերթերու խմբագիրք մի առ մի փաղաքական ժողովէն կանչուեցան, և ի սեր ազգին խնդրուեցաւ իրենցմէ՝ որ ցոյց տան իրենց տեղեկութեանց աղբիւրներն, և եթէ հնար է՝ ժողովոյն վրայ ալ համոզում ներգործեն . բայց ո՛չ ոք ի խմբագրաց չկրցաւ ճանապարհորդ մը յականէ յանուանէ ցուցնել, և նամակ մը երևան հանել : Լրագրի խմբագիրք յայտարարեց թէ իւր հրատարակած նամակներուն բնագիրը չունի, այլ պատճէնն է . զայն ուզեր են . պատճէնին պատճէնն է ըսեր է . բայց վերջապէս պահանջեր է որ անաչառ քննութիւն բացուի, և յայնժամ ինքն ալ իրեն տըրուողները ցոյց տայ . և եթէ խարէութիւն մը կայ հեղինակը չարաչար պատժուի, ամբողջ ազգ մը այսպէս ի զուր յուզելու պատճառ ըլլալուն համար : Իսկ Նորագրի և Մէծմուսայի խմբագիրք պատ ի պատ խօսքերով չեն կրցեր ցուցնել և ո՛չ զոր : Չիմացանք թէ Մամուլ խմբագրին կողմանէ ինչ պատասխան տրուեր է : Իսկ Լոյսի խմբագիր Տ. Հմայեակ վարդապետ՝ որ երկիցս հրաւիրուեր է նշանակած րոյտալ յայտարարութեամբ հանդերձ, երբէք չներկայացաւ, չբարձրեմ, ելի յազոյճ յետ Բեքել կնեխայտանեմ գրելով երկրորդ անգամ հրաւեր ընդունած ժամանակը (*):

Արդ՝ ժողովը, ի խնդրոյ Լրագրոյ խմբագրին, որոշած է առաջիկայ ուրբաթ օր յատկապէս քննութիւն բանալ, հրաւիրելով վերոյիշեալ լրագրաց խմբագիրները :

Ժողովն, ասկէց զատ, նոյն օրը հեռագիր քաշեց կարս, Պայազիտ ու կարին, տեղեկութիւն ստանալու համար :

Պէտք է գիտնալ որ ինչպէս մինչև նոյն օրը նոյնպէս և մինչև այսօր որևէ տեղեկութիւն չունի, ո՛չ Պատրիարքարանը և ո՛չ Բ. Գրուը : Պէտք է գիտնալ որ մինչև ցարդ ուղղակի և ո՛չ ուստեք հեռագիր կամ որևէ ծանօթութիւն եկած չէ այս մասին, մինչդեռ ամենաանձանօթ երկիրներու մէջ իսկ յատուհան ամենաաննշան դէպքեր իսկոյն կըսուին կհրատարակուին :

(*) Այս առաւօտ լսեցինք, թէ երէկ Ս. Պատրիարք Հօր տրուեր է՝ նշանակեալ յայտարարութիւնը :

տարակուին, և իսկոյն մանրամասնութիւններ գունդադունդ կթափին :

Կայ հեռագրական տեղեկութիւն մը, որ երկուշաբթի երեկոյեան դէմ լուեցաւ և առժամայն հրատարակեցաւ իբրև յաւելում Լրագրի . այսինքն է՝ « Երեք-չորս շաբաթ յառաջ պատմամբ « բութիւն մը ծագեր է ֆիւթայիս գաւառին Մինկրէլի (վրացիք) 20 ի չափ « գիւղերուն մէջ . սակայն Ռուսիոյ կողմանէ զրկուած զօրաց գունդ մը 10 օր « ուան միջոցի մէջ ապստամբութիւնը « խղեր և ապստամբները ի հնազանդութիւն բերեր է . այս վերջինները « 120 հոգի կորսնցուցեր են : Տեղդ տա « բաժուած զրոյցներն անհիմն են » :

Այս հաւանական է . ժամանակէ մը հետէ այն կողմերը տրոց և զինուորատուութեան խնդիրներ կ'յուզուին, և ժողովրդեան կողմանէ տրտունջ կըլլայ . մի գուցէ այս անգամ փոքրիկ շարժում մը եղած ըլլայ :

Ի վերայ այս ամենայնի, սպասե՛նք, ստուգեմք, կըսեմք այսօր ալ ինչպէս ըսինք մեր շարաթ առուր թերթով . ըսպասենք տեղեկութեանց և վարչութեան առնելիք պատասխաններուն . անստոյգ զրոյցներու վրայ որոց աղբիւրներուն ինչ վիճակի մէջ ըլլալը բաւական ցուցինք քիչ մը յառաջ, ի զուր չյուզինք, չշարժինք, և մեք մեզէն մեր փաստաց պատճառ չըլլանք : Չկարծուի, թէ մեք երբէք սիրտ, ոգի և զգացում չունիմք, բայց խոհմութիւն, շրջահայեցութիւն պէտք է, մանաւանդ ներկայ ամենաժանր և ամենափափուկ պարագայից մէջ . մի գուցէ շահագէտ և անխիղճ ոմանց զոհ երթանք, մի գուցէ խարդաւանք մը գործիք ընէ զմեզ, և մեր ունեցած ներկայ դիրքն ալ փլասենք ու տուժենք : Լրջաբար խորհինք, լըջաբար շարժինք :

Իսկ եթէ հարցուի մեր կարծիքը՝ Մանուկու մէկի Էֆքեարի շարաթ առաւօտու թերթին մէջ ընդդէմ համօրէն ազգին գտնուած ծանր անարդանաց համար, կըսեմք և բացարձակ կըսեմք թէ յանցանքը ժողովրդեան է . բազմիցս հայհոյեց, բազմիցս նախատեց նա զԱզգը, բայց լուութիւն տեսաւ, և քայլերեցաւ : Մանուկու մէկի բնութիւն եղած է՝ հայհոյանք խօսիլ ազգին դէմ, անարգել, և զինքը գեր ի վերայ քան զԱզգը դասել : Լրագրութեան պարտքն է՝ հասարակաց միւլար ընթացքը յերևան հանել, բայց մեղմիւ և քաղցրութեամբ :

Թերևս այս անգամ խրատուի և ճանչնայ իւր անձին չափը, հասարակաց կողմանէ իւր վրայ եղած զայրոյթը տեսնելով . բայց չեմք կարծեր Անհնար է Մանուկու մէկի՝ փոխել իւր բազմաժամանակեայ

սովորութեան այդ խորին, որ իբրև մորթ մարմնոյն վրայ տարրացած է, և նովաւ մինչև ի Կերեզման պիտի դաճու վիժի :

Գատարանի մնացած է խնդիրը . տեսնե՛նք, ի՞նչ վճիռ կենէ :

Մէծմուսյը-Հավախ , Նորադիր և Ղրագիր անուն ազգային թերթերն երէկ երեկոյեան դէմ բողոքովին խափանեցան՝ լրագրական վերատեսչութեան հրամանաւ :

Ցաւով կլտմք, թէ ուրիշ քանի մը հայ թերթեր ալ պիտի դադարին կամ խափանին, և թէ՛ արդէն խափանեալ լրագրաց խմբագիրք հարցաքննութեան դիտի ենթարկուին կայսերական հրամանաւ :

Եւ ինչպէ՞ս ըսել թէ այս ամենուն պատճառը վերջին քանի մը աւուրց մէջ տեսնուած հրատարակութիւնք և չափազանցութիւնք են, որոց և ո՛չ մին ստուգուած չէ, և որոց պատճառաւ մեր ազգայնոց մէջ ի զուր իրարանցում եղած է : Կը լսեմք թէ այս լրագրաց համար Ռուսաց դեսպանատունը բողոքեր է Բ. Դրան :

Յայտնի է, թէ վերջին օրերս Մշոյ վանայ Աղթամարայ՝ Մարաշի և Չէյթուռնի մէջ հայեր սպանուեցան, յորս կը գտնուին վարդապետ և քահանայ ալ :

Այս խուժարութ անցից վրայ, արդէն Ս. Պատրիարք Հայրը կայսերական կառավարութեան դիմած ու արդարութիւն խնդրած ըլլալով Բ. Գրնէն հեռագրերը գացած էին ստուգութեան համար . սակայն հարկ համարեր է երկուշաբթի առաւօտ երկրորդ անգամ բարձրապատիւ մեծ Եպարքոսին երթալ, և Նորին բարձրութիւնն անմիջապէս իւր խորհրդական վսեմափայլ Սայիտ էֆէնտիի յանձներ է գարձեալ ազդու հեռագրերը քաշել տեղական կառավարութեանց և հրամայել որ անյապաղ ձեռքակալուին ոճրագործք և խիստ քննութեան ու պատժոյ ենթարկուին :

Ս. Պատրիարք Հայրը, այս օրերս բարձրապատիւ Շէյխ-Իւլ-Իսլամ էֆէնտիին ալ տեսութեան դացած ըլլալով, Նորին բարձրութիւնը սիրով ու յարգանքով ընդունելով ինչ ինչ հարցումները քննելով և Ս. Պատրիարք Հայրն ալ այս առթիւ մանրամասն նկարագրեր, քովը պատրաստ գտնուած գրաւոր մէկ տեղեկագիրն կարդացեր, և Բ. Գուռը կարդեալ հարստահարութեանց խառն մանաժողովոյ ծրագրերուն ուշադրութեան առնուիլը խնդրեր է :

Շէյխ-Իւլ-Իսլամ էֆէնտին՝ գրուածն ուշադրութեամբ լսելէն յետոյ, հաստատապէս խոստացեր է՝ յիշեալ ծրագրաց նախարարաց ժողովոյ ներկայացած ատեն, անյապաղ գործադրութեան համար փոյթ տանիլ :

Ս. Պատրիարք Հօր այս փութալնութիւնը հասարակաց շնորհակալեաց արժանի է : Նորին Սրբազնութիւնը անքուն կաշխատի՝ մեր դաւառաբնակ ազգայնոց մշակութեան անդորրութեան ու ապահովութեան միջոցներ ի գործ դնելու համար . և բաց յայտանէ՝ դաւառական

դէպք մը պատահած ատեն իսկոյն կփութայ զարժանն անօրինել տալ :

Մարաշէն հեռագիր մը եկած է Պատրիարքարան, որ տեղւոյն և Չէյթուռնի ազգայնոց անդորր ու խաղաղ վիճակի մէջ, և Չէյթուռնի ոճրագործ գայմագամին ի Մարաշ բանտակուած ըլլալը կը ծանուցանէ :

Արդարութիւնը կպահանջէ, որ այդ գաղան գայմագամը ի կախաղան բարձրանայ, յօրինակ այլոց :

Պրուսայի ազգայնոց երևելիներէն Ամիրայեան Մ. Գրիգոր աղայ՝ որ այս օրերս կնքեր է մահկանացու կենաց ընթացքը, կտակաւ թողեր է 100,000 դրշ՝ ամուսնոյն, 30,000՝ Պրուսայի եկեղեցւոյն, և 30,000 դրշ ալ՝ Ս. Էջմիածնի, Ս. Երուսաղիմայ, Աղթամարայ, Արմաշի և իւր ազգականաց համար :

Հանդուցեալն այսպէս ո՛չ միայն իւր անունը կանմահացունէ, այլև ազդու օրինակ մը կթողու ուրիշ ձեռնհաս ազգայնոց :

Արժան է, որ տարին գէթ մի անգամ հանդիսաւոր յիշատակութիւն ըլլայ Պրուսայի և այլ կտակընկալ վանօրէից եկեղեցեաց մէջ :

Պատրիարքարանը յատուկ թագրերով մը խնդրեր է կայսերական կառավարութեանէն, առաջին աստիճանի Մէծիտիէ պատուանշան շնորհել Աղթամարայ ամեն . կաթողիկոսին համար :

Պատրիարքարանը վերջապէս յաջողեցաւ յանձնաժողով մը կազմել տալ Բ. Դրան, Ս. Երուսաղիմայ Բեթղէմի եկեղեցւոյն սեպհականութեան խնդրոյն քննութեան համար : Գիտեն փունջի ընթերցողք, թէ յոյն բաւական ժամանակ է ի վեր ամեն միջոց ի գործ դնելով կայնէն, թէ Հայք սեպհականութեան իրաւունք չունին այդ եկեղեցւոյն վրայ . մեք հաւաստի եմք, թէ մեր ձեռքը գտնուած գրերը անհերքելի կերպիւ պիտի հաստատեն մեր իրաւունքը :

Պատրիարքարանի կողմանէ յիշեալ յանձնաժողովոյ անդամ նշանակուած են գեր. Տ. Սիմէոն Ս. Արքեպիսկոպոս և Սէրվիլէն ու Մագսուտեան Սեպուհ էֆէնտիները :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Նկատել արժան է, թէ Տաճկաստանի ներկայ խնդրոց խելամուտ ուղղո՞ն վտխանակ Տաճկաստանէն լոյս առնելու՝ առաւել Անգղիոյ վրայ կգարձունէ ուշադրութիւնը, տեսնելու համար թէ Անգղիոյ մէջ ի՞նչ խորհին, ի՞նչ կխօսին Տաճկաստանի վրայ : Եւ արդարև Անգղիոյ կառավարութիւնը առաւել զբաղեալ կերևի Տաճկաստանի խնդրոց պատճառաւ . հասարակաց խորհրդարանը՝ թէպէտ մինչև ցարդ բայց առաւել այս վերջին օրերս, մանաւանդ Տաճկաստանի վերաբերեալ բազմաթիւ գրութեանց ներկայանալէն հետէ, ընդդիմադիր մասին կողմանէ հարցումներ կթափին նախարարութեան վրայ, և կհարկադրեն պատասխանել : Գլխաւոր նախարարն և արտաքին գործոց պաշտօնեայն կջանան

համոզել թէ կառավարութիւնը իրաւամբ մերժեց կորչաքօֆեան ծրագիրը, և ի Պէշիքա անգղիական նաւատորմին ներկայութիւնը տնհրածեշտ էր՝ ի Տաճկաստան վաղահաս յեղափոխութիւն մը տեսնուելու երկիւղէն հարկադրեալ : Կյաւելու նախարարութիւնը, թէ Անգղիա պիտի պահէ չեզոքութիւնը, և կջանայ որ ուրիշ կառավարութիւնք ալ այսպէս մնան, և Եւրոպիոյ վողովման անդիլ չտրուի :

Նորագոյն հեռագրէ մ՝ առնելով կուտամք այս տեղեկութիւնը . սպասել պէտք է գիտնալու համար թէ այնուհետև ի՞նչ խօսքեր անցած են խորհրդարանին մէջ և ի՞նչ վախճան ունեցած են :

Տաճկաստանի նկատմամբ Անգղիոյ ընթացքը բաւական յայտնի է առ այժմ . բայց Աւստրիոյ Ռուսիոյ և Գերմանիոյ կառավարութեանց բուն դիտաւորութիւնը ոչ ոք կրնայ բացատրել : Ռուսիա տակաւին կամբաստանուի թէ հաշտ աչօք չնայիր Տաճկաստանի վրայ, թէ նոյն ինքն է որ զՌուսիա ալ կգրդուէ, և Ռուսիոյ կողմանէ Բ. Դրան տրուած ծանուցագիրն մերժուած է ուրիշ կառավարութեանց կողմանէ, և միանգամայն խրատ տրուած է Ռուսիոյ, որ յետս կուէ զայն և կատարեալ չեզոքութիւն պահէ, սակայն Ռուսիա ընդհակառակն կվարուի եղեր :

Կհաւաստեն, թէ Սերվիոյ ներկայ անյաջող վիճակին վրայ, որոյ նկարագիրը սակաւ մի յետոյ կտեսնուի, Ռուսիա զինադադարի և դեսպանաժողովի առաջարկութիւն կընէ ուրիշ կառավարութեանց . և շատերուն կողմանէ հաճութիւն կը տրուի եղեր, բայց պայմանաւ որ դեսպանաժողովոյն մէջ Սերվիոյ խնդրէն զատ ո՛ր և է խնդիր չյուզուի : Գերմանիա, կըսեն, արդէն բացարձակ կերպիւ այս պայմանը նշանակեր է : Աւստրիոյ վրայ միտքերը չփոթեալ են Գլէքի յանկարծական փակմանէն ի վեր, և դժուարին է վճուել թէ յայս կամ յայն կգտնուի :

Յունաստանի վրայ ալ ամեն օր և ամեն տեղ կխօսուի : Անգղիոյ խորհրդարանին մէջ սորավրայ ալ խօսք եղեր է : Լուր ելնելով թէ Բ. Գուռը միտք ունի Յունաստանի սահմանին մօտերը Չէքքաներ գումարել, հարցեր են, և նախարարութեան կողմանէ պատասխան տրուեր է թէ մեծ Եպարքոսին իմացուած է որ այդպիսի դիտում մը չունի օսմանեան կառավարութիւնը : Միւս կողմանէ Յունաստան կշարունակէ չեզոքութեան յայտարարութիւնները, և իրեն ընծայուած որևէ շարժում իսկոյն ի պաշտօնէ մերժել կփութայ . ինչպէս մերժած է՝ առ Գէորդ թագաւորն Աթէնք շուտով վերադառնալու համար հեռագիր քաշուած ըլլալուն, և միանգամայն երեսփոխանական ժողովոյ ընդ փոյթ գումարման և 40 հազար զօրաց սպառազինելու զրոյցները :

Եւ արդարև երբ չեզոքութեան յայտարարութիւնները՝ որ ամենուստ կըսուին, անկեղծ ըլլան, մեք կյուսամք թէ Տաճկաստանի ներկայ դժուարութիւնք ի մօտոյ վախճան կառնուն, և ներքին բարեկարգութեանց կարևորագոյն գործին ձեռնարկուելով երկիրը կսկսի վե-

րակահաճել, և այլ ևս օտարն այս կամ այն անուններով ուղղակի կամ անուղղակի միջամտելու առիթ չգտնէր :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս առաւօտ տաճիկ լրագրաց միջոցաւ հրատարակեալ պաշտօնական յայտարարութիւն մը, կպատուիրէ հասարակութեան, որ այսուհետեւ ասքին անդին ժողովելով կառավարական գործոց և վարչական նոր հաստատելի ձևին վերայ չխօսին իրենց կողմանէ կարծիքներ յայտնելով և գայթակղութիւն պատճառելով : Թէ՛ ոստիկանութեան պատուիրուած է որ այսուհետեւ ձերբակալուին ու պատժուին այսպիսիք, և գաղտնի լրտեսներ ալ հանուած են : և թէ՛ լրագրական վերատեսչութեան ալ հրաման գացած է՝ լրագրութիւնը այսպիսի հրատարակութիւններէ զգուշացուներու համար : Յայտարարութիւնը այս առթիւ կ՛անունուցանէ, թէ վարչական նոր ձևին վերայ ամենայն լրջութեամբ ու շրջահայեցութեամբ խորհրդակցելու ժամանակ չը մտար ներկայ պատերազմական ծանր դրաղմանց պատճառաւ, և թէ՛ յետ վախճանի ծանուցեալ խնդրոց՝ նոյն կարևոր խնդիրն ալ պիտի կարգադրուի :

— Պուլըարիոյ ապստամբութեան ժամանակ ձերբակալեալ և Ֆիլիպէ բանտարկեալ 800 պուլըարաց 400 ին ներում շնորհուեր է՝ նկատելով որ զէն ի ձեռին տեսնուած են բայց գործածած չեն : Իսկ մնացորդին դատաստանը պիտի տեսնուի և ըստ օրինի պիտի պատժուին :

— Ռուսիայէն տիկնայց ընկերութիւն մը՝ մետաքսեայ ծանրագին դրոշակ մը Սերվիա առ Չեքոսլոակի զրկելու վրայ են կզեր :

— Կայսերական կառավարութիւնը որոշեր է՝ առաւել ևս ամրացուներ կարօ, կարին և ուրիշ կողմերը :

— Յունաց Պատրիարքարանի միջոցաւ ի նպաստ զինուորական ծախուց հանգանակեալ 1000 լիրա՝ Բ. Դրան յանձնաժողովին զրկուեր է :

— Բուսթիլի երկաթուղւոյն ընդհանուր տնօրէն Պ. Հիրշ Սօֆիայի մէջ 200 անկողին պարունակող հիւանդանոց մը ընծայեր է կայսերական զօրաց համար :

— Շուրայի-Տէվլէթի անդամներէն Քէնան պէյ՝ կիւրակի օրը մեռաւ : Վագբթ՝ արբեցութիւնը Քէնան պէյի մահուան գլխաւոր պատճառ կհամարի, և ի զգուշութիւն կհրաւիրէ արբեցողները :

Յիշեալ տաճիկ լրագիրն Լա թիւրքիէն իմանալով, որ Գարատաղի իշխանը պատուիրեր է իւր զօրաց՝ Հէրսէք մտածատենիին աւարել գրաւել ժողովրդեան ոչխարն ու արջառն, կըսէ թէ ուրեմն օսմանեան զօրքն ալ Չէթինէ մտածատենը օսմանցիք այս կամ այնպէս վարուեցան ըսելու և արտնջելու իրաւունք չմնար :

— Հեյլենական լրագրի մը թղթակիցն՝ որ Չայչար կգտնուի եզեր, գիպուածով վիրաւորուեր է :

— Ժամանակէ մը հետե Պէշիքա գըտնըուող անգղիական նաւատորմիղն՝ քանի մ'օր Միջերկրականի մէջ շրջագայելու համար ձամբայ ելեր է, և այժմ Պէշիքա միայն երկու շոգենաւ կայ եզեր :

— Ասկէց յառաջ կայսերական կառա-

վարութիւնը որոշած էր՝ Պոսնայի ու Հէրսէքի ապստամբութեան պատճառաւ միասեալ կողմերն միայն տարի մը տասանորդէ և երկու տարի հարկէ ազատ թողուլ : Արդ՝ այս անգամ Բ. Դրան հըրամանագիր մը յիշեալ կուսակալութեանց միւս վիճակաց ժողովուրդն ալ մէկ տարուան համար տուրքէ ազատ կհրատարակէ, ի փոխարէն իրենց կրած անձկութեան :

— Օգոստափառ Սուլթանը, անցեալ ուրբաթ ցերեկային աղօթքէն յետոյ, իրեն յատուկ շոգենաւով դէպ ի կղզիները պոտոյտ մ'ըրաւ : Կիւրակէ օր ալ դարձեալ շոգենաւով դէպ ի Չէքոսլոակիէն, և երեկոյին դարձաւ :

— Ծանուցինք շաբաթ օրը, թէ թղթագրամի գործողութեանց համար յատուկապէս յանձնաժողով մի կազմուած է ընդ նախագահութեամբ ելուստից նախկին նախարար Համտի փաշայի : Ի վերջոյ իմացանք այս յանձնաժողովոյ անդամոց անուններն ալ, որք են Միհրան պէյ, Թահիր էֆէնտի, Էտիպ էֆէնտի, Լօղօֆէթ պէյ, Ֆէթահ պէյ, և օսմանեան Պանքայի համարակալ Նազիֆ, և Պրուսայի նախկին տոմարակալ Մալիէ էֆէնտիներն : Շաբաթ օրը սկսեր են նիստ ընել :

Այս մասին յատկապէս կանոնադրութիւն մ'ալ խմբագրուած և օգոստափառ Սուլթանին ներկայացած ըլլալով՝ քիչ օրէն կհրատարակուի :

— Կլեմէք, թէ Պօլոյ կալուածական սրոց կանոնադրութեան մէջ ինչ ինչ փոփոխութիւն եղեր է գանձուց պաշտօնատուէն, և առ ի ըննութիւն՝ Շուրայի-Տէվլէթի ներկայացած է :

— Մայրաքաղաքիս մէջ հրատարակուող Տէն անուն պուլըար խափանեալ լրագրին խմբագիրը՝ հարցաքննութեան ենթարկուեր են :

— Օսմանիյէ թատրոնին մէջ՝ ի նպաստ զինուորական ծախուց՝ արտաքոյ կարգի ներկայացուցներ տրուելով, առ այժմ 68 լիրա 38 դրշ զրկուեր է :

— Իթիթիհատ լրագիրն՝ ամառկաններուն սեղանաւորաց կողմանէ խիստ անգըթաբար զեղչուելուն վրայ խօսելով՝ կյաւելու թէ քանի մ'օր յառաջ 53 լիրայի ամառկան մը մինչև 8 լիրայի զեղչուեր է, և տէրն ալ առ հարկի ստիպուեր է ընդունիլ : Ապա գիտողութիւն կընէ, թէ բաւական դրամագլխով ընկերութիւն մը եթէ այս նպատակաւ կազմուի՝ որչափ ալ չափաւորութեամբ վարուի՝ դարձեալ կշահի, և հասարակութիւնն ալ այսչափ չփասիր :

— Իւսկիւտար սափրիչ Մէհմէմէտ էֆէնտի անուն մէկը՝ 17 մէծիտ և 1 ոսկի գորտօն ընծայեր է, ի նպաստ զինուորական ծախուց :

Սերվիոյ ու Գարատաղի վիճակին և պատերազմին վրայ հետեւեալ նոր տեղեկութիւնները կգտնեմք՝ պաշտօնական և մասնաւոր :

Օգոստափառ Սուլթանին բարեներք հրամանատարաց ու զօրաց տանելու պաշտօնով բանակները զրկուած թիկնապահներէն հազարապետ Թահսին պէյ՝ յուլիս 17 թուով հեռագիր մ'ուղղեր է կայսերական պալատան առաջին քարտուղա-

րին, որով կ՛անուցանէ՝ Ատլիյէ երթալով Նորին վեհափառութեան բարեներք զօրաց տալէն անմիջապէս յետոյ, իզվօր երթալ՝ հրամանատար Օսման փաշային հետ տեսնուիլ, և երեկոյին ժամը 11 ին բանակին մէկ մասը պատերազմէ դարձած ատենը, ամենքը շարուելով՝ մի առ մի բարեւելը ի դիմաց Օգոստափառ Սուլթանին : Այս միջոցին նուագածութիւն եղեր, և համայն զօրքը՝ կանոնաւոր և օգնական՝ երիցս « փատիշահքմ չօք եաշա » ըսելով բարեմաղթեր են Թահսին պէյ հեռագիրը կվերջացունէ զօրաց վրայ տեսնուած աշխոյժն ու խանդը դրուատելով :

Նիշէն յուլիս 18 թուով հետեւեալն հեռագրեր են վագբթ լրագրոյն :

« Տեղւոյս զօրաբաժինն սկսաւ շարժիլ երէկ առաւօտ օգնական գունդ մը Ղրամատա անուն սահմանագծի (չիթ) դրնէն դէպ ի ներս գիմեց, և ճամբուն վրայ գտնուած ամրութիւնները գրաւեց, ինչ պէս նաև Գազուացի ճամբուն հետ միացող գիւրքը : Այս պատերազմին մէջ սերվիացիք մեծ կորուստ ունեցան, բայց կայսերական զօրաց կողմանէ՝ ոչ ոք մնասեցաւ : Յիշեալ գունդը այս գիշեր հոն պիտի անցունէ : Սիւլէյման փաշայի զօրաբաժինը սոցա հետ միացած չէ դեռ, բայց Պանտիքուլայի կողմի սերվիական գիւղերը բացերու մէջ են : Կյուսացուի թէ այս երեկոյ Նիշի զօրաբաժինն հետ կը միանան » :

Լա թիւրքիի հեռագրեր են՝ յուլիս 17 թուով :

« Երէկ Պէլկրատի պատերուն վրայ՝ Գարատեղիովի իշխանին մէկ յայտագիրը տեսնուեցաւ, որով քանի մը փառամու անձանց երեսէն Սերվիոյ գլխուն եկած թշուառութեան վրայ խօսելով՝ ժողովուրդը կյորդորէ գահընկէց ընել զՄեւան : Այս յայտարարութիւնը Պէլկրատի մէջ մեծ յուզման պատճառ եղաւ : Մեւան իշխանը Բարայինէն Ալեքսինաց ուղեւորեցաւ՝ զօրաց ընդհանուր հրամանատարութիւնը ձեռք առնելու համար : Դարձեալ Լա-թիւրքիին վիտինէն յուլիս 18 թուով :

« Սերվիացիք ամեն կողմանէ հալածուելով՝ դէպ ի Ալեքսինաց ու Տէլկրատ կիտխին : Օսմանեան զօրքը՝ երեք կողմանէ Սերվիացոց ետեւէն իյնալով երէկ Սերվիա մտած է : Օսման փաշայի զօրաբաժինը յարձակման սկսաւ : Դանուբեան կուսակալն տեղս հասաւ, որ կայսերական զօրաց կողմանէ գրաւեալ սերվիական իզվօր քաղաքը պիտի երթայ : »

Վիտինէն վագբթի ալ հեռագրուած է՝ յուլիս 19 թուով :

« Երէկ վիտինի Պէրդուա գիւղին կողմերը 10-15 սերվիական հեծելազօրք 27 չէքքէսներէ բաղկուելով սաստիկ նեղուեցան և մէկը վիտին բերուեցաւ, և վերաւորեալ ըլլալուն՝ հիւանդանոց դրուեցաւ : Սերվաց ձիերն ու զէնքերը չէրքէսք առեր են : Հաֆըզ փաշայի զօրաբաժինը յուլիս 17 ին Ղրամատի դրնէն Սերվիա մտնելով և 4 ժամ պատերազմելով՝ մինչև 2 ժամ ներս մղեց սերվիացիները, և նոցա պատնէշները գրաւեց : սերվիացիք 4000 հոգի էին և 2 թնդա-

նօթ ունէին. մեծ կորուստ ունեցան. կայսերական զօրաց կորուստը շատ քիչ է: Ահմէտ է յուզ. փաշա ալ յուլիսի 18 ին Ղրամատայի դրնէն երկու ժամու ճառնապարհ ներս քայլց, և պատերազմն առաւօտուն սկսելով մինչև ժամը 8 դեռ շարունակելը հեռագրուած է, և կիւ մացուի թէ յաղթութիւնը դարձեալ կայսերական զօրաց կողմն է. Յուլիսի 18 ին Սիւլէ յաման փաշա Պատիրօլայի դրնէն Սերվիա մտեր, պատերազմին մէջ յաղթական հանդիսացեր, սերվիացիները մինչև 2 ժամ ներս հալածեր, և 180 հըրացան, շատ մը կուռք, ձի և այլն ձեռք անցուցեր է: Բռնուած գերիներուն հարցաքննութենէն իմացուեր է, թէ թշնամին 8 վաշտ, 12 թնդանօթ ունի եղեր, և շատ կորուստ ունեցեր է, մինչդեռ մեր կողմանէ քանի մը օգնական մեռած է, և կանոնաւոր զօրքէն ո՛չ ոք վնասուած չէ:

Պատերազմական այս տեղեկութիւնները օտար երկրներէ եկած հեռագրերը ալ կհաստատեն, և կգովին օսմանցի հրամանատարաց շարժումներն, իսկ զՍերվիա տաղնապալից վիճակի մէջ կնկարագրեն, հրատարակելով թէ շատ հրամանատարներ փոխուած են, թէ սերվիական զօրքը ուժաթափ եղած է, և թէ ժողովրդեան մէջ երկպառակութիւն կայ: Նոյնպէս Գարատաղի համար ձախող լուրեր սկսան թափիլ. Գարատաղիք կհալածուին օսմանեան զօրքէն, և կիփախին շատ կորուստ տալով:

— Պասիրէթ կզրէ, թէ Հէրսէքի մէջ Գարատաղի սահմանին մօտ Պէլանա ըսուած տեղը, Գարատաղիք խիստ մեծ բազմութեամբ ու զօրութեամբ յանկարծ Սէլիմ փաշայի հրամանատարութեան տակ գտնուող զօրաց վրայ յարձակեր են. կայսերական զօրքը թէև սակաւաթիւ բայց ամենայն քաջութեամբ գիմադրեր է. սակայն չէ յաջողեր զօրութեանց խիստ անհաւասար ըլլալուն պատճառաւ, և ցիրուցան է եղեր: Այս պատերազմին մէջ խուճաք մը օսմանեան զօրք և քանի մը հրամանատարք ինկեր են:

Ի Լ Ա Ն
ՊԱՍՊԸ ՍԵՐԱՍՔԷՐԻ

Ասաքիրի յահանէ էլպիսէ անպարընա թարիխը գօնթրաթօտա հէման թէսլիմ օրունմագ իւզրէ լուզումի օլան իքի պին պէշիւզ թօփ օն պիր լիպրալըգ ա մերիգանըն պէհէր թօփը սէքսէն ալթը զրուշ օն փարա վէ իկիրմիպէշ պին թօփ օն իքի լիպրալըք պմերիգանըն պէհէր թօփը սօքսան ալթը զրուշ օն փարայա օլմաք վէ պահասք մագ սլուզ սէնէտլէրի թարիխինտէն իթիպարէն օթուզ պիրէր կիւնլիւ իքիշէր թագսիտ վէ սլմ մէհիտիյէ իկիրմի պիր պուշուք զրուշ հիսապը իլէ թագսիտլէրի կէլթիքէ պէհէր թագսիտի նէ մըդտարա պալիզ օլուրսա պիր սիւլսի էտիրնէ վէ պիր սիւլսի Սէլանիկ վէ պիր սիւլսի Այաքն էմվալինտէն հավալթէն վիրիմէք շէրայիթի իլէ թալիպի էօհատսինտէ օլուպ թէմուզը բու մինին իկիրմի իքինճի փէնճէնպիհ կիւնի գարարը գաթիսի վէրլիէհէկինտէն իթա իթմէկէ թալիպ օլանլարըն եէվմը

մէզքիւրտէ Տարը Ծորայի ասքէրիյէ կէլմէլէրի:

1876 թէմուզ 19

Պապը Սէրասքէրի
Վէլի էֆէնտի սահլիինտէ քեային պէզ ֆապրիգայի հիւմայուն տէրունինտէ վազը պաղճէ էնվայի մէյվէ վէ սէպղէ վէ սայիրէ իլէ իշպու սօքսան իքի սէնէսի շէհըր թէմուզըն իկիրմինճի կիւնինտէն բուզը քարմա գատար վէ պունտան սօնրա սէնէլիկի քերայա վիրիլէհէկի վէ շէհը մէզքիւրին օն եէտինճի ճիւմա իրթէսի կիւնի միւզայիտէսի իճրա օլունաճաղը ճիհէթլէ օլ վէճէլէ իճարէ թալիպ օլանլարըն Տարը Ծորայի ասկէրի լէվազիմ տայիրէսինէ միւրաճաաթ կլէմէլէրի իլան օլունուր:

13 թէմուզ 1876

Պապը Սէրասքէրի

Բումէլիի երկաթուղոյ բաժնետոմսերուն 39րդ վիճակահանութենէն (երէկ կատարուեցաւ) շահող մեծ թիւերն են:

(Նօ.)	(Ձր.)	(Նօ.)	(Ձր.)
1913631	600000	283537	1000
1969974	60000	362442	»
890452	20000	373379	»
980156	»	449590	»
894546	6000	611985	»
950798	»	771107	»
4392900	»	890453	»
1444352	»	780160	»
1965521	»	1027024	»
1972220	»	1187001	»
37137	3000	1204657	»
37138	»	1331384	»
486189	»	1373217	»
815115	»	1373220	»
869323	»	1421947	»
950799	»	1444353	»
1066916	»	1444386	»
1349225	»	1536530	»
1375624	»	1579777	»
1656628	»	1622017	»
1866773	»	1643418	»
1965525	»	1643420	»
37139	1000	1692934	»
37299	»	1842789	»
118423	»	1871584	»

400 սկան ֆրանք շահողք

37135	40	789261	65	1375621	25
37296	300	800261	65	1392896	900
80566	70	815111	15	1421946	50
118421	25	869321	25	1444351	55
134651	55	884066	70	1444386	90
189661	65	890451	55	1530526	30
192231	35	894546	50	1579776	80
222071	75	950796	800	1622016	20
235811	15	980456	60	1641426	30
283536	40	988591	95	1643416	20
328086	90	1027021	25	1656626	30
362441	45	1033056	60	1692931	35
373376	80	1066916	20	1751131	35
384386	35	1096106	10	1783501	5
386831	90	1105076	80	1842786	90
437141	45	1106551	55	1866771	75
446311	15	1151316	20	1871581	85
449536	90	1170081	85	1886116	20
486186	90	1187001	5	1893816	20
490141	45	1204656	60	1913631	35
539436	40	1245736	49	1918691	95
571801	5	1256701	5	1965521	25
573676	80	1290776	80	1969971	75
595666	70	1331381	85	1972216	20
611981	85	1347406	10	1974756	60
769261	65	1345221	25	1978981	85
771406	10	1373216	20		

ՊՈԼԻՍ ՖԻՆԱՆՍԱՆԸՂԱՐ ԵՕԳՈՒՇՈՒ Ս. Մ. Բ. Ի. Ք. Ա. Ն. Ի. Ա. Ն. Թ. Ի. Ի. 27

Ընտանեկան ամեն տեսակ կարերու, թէ՛ ոտքով և թէ՛ ձեռքով դիւրաւ գործածելի մեքենաներուն զանազան տեսակները, աժան գընով կը ծախուի և ծախու առնողներուն ձրի դաս կը տրուի. նաև մինչև վեց ամիս քանի անգամ որ աւրուի՝ ձրի կշտկուի: Կարի մեքենայի վերաբերեալ ասեղ, դերձան, և ուրիշ զանազան գործիքներ կգտնուին, ինչպէս նաև չորապ, ֆանէլա, շալ, ուսկուֆա, թեւոց և չործող մեքենաներ: Արուած մեքենաներ կը շտկուին և մեքենայով կարել սորվիլ ուղողներուն ալ դաս կը տրուի:

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏՔ ՀՈՂՈՒԹԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է այն դեղահատը, նաև յղային տկարութեան, ուժաթափութեան և տիրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անպաւտարութեանց հետքերը: Սրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի. արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ: Իւր դեղական մեծ ազդեցութեամբ սրտախառնութիւն, կուժուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կազեր, գլխի ցաւեր կը վանէ. մարտողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտոցութիւններէ՝ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական դիրքը կզգենու:

ONGUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈՂՈՒԹԻ

Սորթային հիւանդութիւնը և վերք բուժելու մասին ունեցած պալսամական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վերքեր, ուռեցք, քաղցկեղ (շերիփէնչէ), սրունից և ստեանց վերքեր կամ բոլորովին կանցնին և կամ կլուանան. օգտակար է նաև հարրուիի, հազի, սրտի բարախման, մանուսնի օղաքալ (եէլ) ըսուած հիւանդութեան: Իւր կազերիւն և զօրաւոր ազդեցութեամբ խոյլ (սըրաճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ինչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմադրուէ:

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու ջով, և մասնաւորապէս Պահճէ-գափու թաշ խանի կողմերը Պ. Գասապեանի դեղարանը Նօ. 7 կը ծախուի:

Աւելի անել ուղողը կը հրաւիրուի առ հեղինակն տղթոր Հոլլուէ Ի Լոնտոն Սքրաֆորտ փողոց թիւ 555:

ՊԱՅՄԱՆՔ ՓՈՒՆԶԻ

- 1.—Փունջը 2ՈՐԵԲԵՄԱՐԹԻ և ԵՍԱՍԹ օրերը կը հրատարակուի:
- 2.—Տարեկան բաժանորդագրին է միայն չորս արծաթ մէհիտ կանխիկ վճարելի թէ՛ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ՛ գաւառաց համար:
- 3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի:
- 4.—Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ:
- 5.—Հատը 40 փարպ է, և կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու ջով:
- 6.—Մանուցման տողը 3 զրուշ է մէկ անգամի համար: Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար:
- 7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալաճաճեան, Կ. Պօլիս Ալաճա-Համամ Խալիլ խան միջին յարկ թիւ 19:

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ Բիգա փաշա խան քիւ 3